

ՄԱՐԴԵՍԵՐ ԶՕՐՋ ՄԻՒԼԼԵՐ ¹⁾

III. Նորա կեանքի պատմութիւնը:

Եթէ Զորջ Միւլլէր եղած լինէր Ղիրքի և հարստութեան տէր մի համբաւաւոր Անգլիացի, եթէ եղած լինէր Ուզգալին, եկեղեցու պատկառելի ներկայացուցիչը, եթէ նորա որքանոցները պատսպարուած լինէին բարձր հովանաւորութեան տակ, եթէ նոցա եկամուտները հաւաքուած լինէին եռանդուն կամաւոր զինուորների մի բանակի ձեռքով, և եթէ նոցա գոյութիւնը անդադար հանրալին աչքին դպէր շաւլ ծանուցումներով, ալն ժամանակ բաւական դիւրին կլինէր հասկանալ նորա լաջողութեան պատճառը: Ճշմարիտ է թէ շատեր որոնք ունեցել են այս նպաստաւոր պայմանները, ալնուամենայնիւ, վերջացել են խալտառակ հետեանքով: Բացի այդ պէտք է դիտենալ թէ նոցա գոյութիւնը բաւական է լուսարանելու համար ալն արդար իրաւունքը որի շնորհիւ Միւլլէրի անունը տհազին հռչակ է հանել աշխարհիս մէջ: Զորջ Միւլլէր, սակալն, ինչպէս պիտի տեսնուի իւր նշանաւոր կեանքի այս խիստ հարեանցի ակնարկից, չունէր այդ նպաստաւոր պայմաններից և ոչ մէկը: Նա օտարական էր մի խորթ երկրի մէջ: Զորջ Միւլլէր գերմանացի էր ծնունդով և կրթութեամբ: Նա չունէր ունեւական կալուածք, և ոչ էլ մի անկախ կամ որոշ եկամուտ: Անգլիա զաւուց լիտոյ նա պատկանում էր մի աննշան, հետընկած աղանդի: Նորա որքանոցները սկսեցին իրենց գոյութիւնը ամենահամեստ ճանապարհով առանց ո և է պաշտպանութեան: Նորա եկամուտները եկան առանց մուրացկանութեան ձևեր գործածելու: առանց գործակալի և առանց անձնական դիմումներ անելու հանգանակութեան համար: Երբէք նա իւր վերալ ուշադրութիւն չհրաւիրեց հրապարակալին ծա-

¹⁾ Լուսալ № 4.

նուցումներով ինչպէս որ ընդհանուր անհրաժեշտութիւն է Անգլիոյ մէջ—սլլ միայն աղօթեց, եւ արագէս ստանում էր կանխիկ փողը:

Նորա ծնունդը:

Ձորջ Միւլէր մի Պրուսիացի բաժահաւաքի (աքցիզնի չինովնիկ) որդին էր: Նա ծնել էր Կրոպէնշտադ կոչուած տեղում, բրուսական Սաքսոնիայի Հալբերշտադ քաղաքի մօտ, 1805-ի սեպտեմբեր 27-ին: Նորա ծնելուց քսան չորս փերջը Նելսոնը ընկաւ Տրաֆալգարոմ: Նոյն հոկտեմբերին Պրուսիան ընկճուեցաւ, ջախջախուելով Նապոլէոնի ոտքերի տակ: Ենայի աղետալի դաշտում և միայն իւր վրէժը կարողացաւ առնել եօթն տարի լետոյ, Լէյպցիկի պատերազմում: Թէպէտ և Միւլէր երեսայի նման ապրում էր կատաղի պատերազմների դաշտում ուր կախրութիւնների ճակատադէրը վճռուեցաւ, և տասն տարեկան էր երբ Վատերլոն վերջապէս խաղաղութիւն պարգևեց Եւրոպային, սակայն այդ երեսայի հոգին կարծես անեղծ էր մնացել այդ ազդեցիկ պատերազմների տպաւորութիւնից որոց աղմկալի մթնոլորդի մէջ նա մեծանում էր: Որչափ որ հնար էր ինձ ուշադրութեամբ հետեւել, ես հետեւել եմ սորա երկասիրութիւններին և ամենեւին չեմ հանդիպել մի արնալիսի ակնարկութեան որ նշմարել տար թէ իւր մանկութիւնը անց է կացրել կեդրոնական Եւրոպայի աքլորակուի ասպարէզում ուր կռիւը առաւել արիւնոտւշտ և գաղանալին էր քան երբ և իցէ ուրիշ ժամանակ: Այս շատ նշանակիչ մի պարագայ է: Իւր ծնունդից ի վեր քաղաքական բաները ամենեւին չգրաւեցին իւր ուշքը:

Ի ծնէ գող:

Իւր երեսալութեան օրերում շատ բարի ծաղիկ մէկը չէր: Այս աշխարհիս բաները արնքան ահագին հրապուր ունէին այդ տղայի համար, որ նա դրուստը անած չէր կարողանում մինչև անգամ իւր ձեռքը ետ պահել ջիւղիւթիւնից և գողութիւնից: Եթէ երբէք կար մի տղալ որ երևում էր թէ նախաստամանուել է իւր կեանքը վերջացնելու ոճրագործների բանդում, այդ տղան իսկապէս Ձորջ Միւլէրը պիտի լինէր ամենից աւելի: Նա կարծես գող դառնալու համար ծնուած լինէր: Նա սկսեց ծուռ գնալ եթէ ոչ օրօրոցից, սուտեր խօսելով և փող գողանալով, գոնէ ստուգ է որ այդ ընթացքին հետեւեց այն օրից ի վեր երբ ֆսթանի տեղ վարտիք սկսեց հագ-

նելու նա ինքն է մեղ ասում այս ամենը, քարաքտերխտիկ պար-
զութեամբ, իւր զուարճալի ինքնակենսագրութեան մէջ, Եւ-
երեակալեցէք ձեզ, ակոյ պտուղի կամ պահարանի հանաք-մա-
նաք գողութեան պէս չէր, այլ զգուշաւոր, սխտեմատիկ ու
մարդավարի դրամական գողութիւն էր: Հալըրը տալիս էր նո-
րան դրպանի փող պատուիրելով որ կանոնաւոր ու մանրա-
մասն հաշիւ ներկայացնէ իրեն, ուստի, ըստ կարելոյն, այս
փոքրիկ շահախնդիրը աշխատում էր կեղծել իւր համարատու-
թիւնը: Յետոյ նա սկսեց կողոպտել այն փողերից, որ հալըրը
հաւաքում էր տուրքերից: «Տակաւին տասն չեղած, ես պար-
քերաբար սկսեցի գողանալ կառավարութեան փողը որ հօրս
մօտ էր գտնուում, և լետոյ հալըրս պարտաւորուում էր հատուցա-
նելու: Վերջ ի վերջոյ գողութիւնը բռնուեցաւ և գողացած փողը
յտան կօշիկի մէջ ոտքի տակին պահած. տարակոյս չկալ որ
փառաւոր ծեծ կերպււ. բայց այս ծեծից ալն խրատը միայն
շահեցաւ որ ալնպէս սարսաղ չլինի որպէս զի ուրիշ անգամ
ևս կարողանան գողութիւնը բռնել:

«Ստորին անբարոյական»:

Զօրջ Միւլէր տասն և չորս տարեկան էր: Իւր մօր մե-
ռած օրը նստեց թուղթ խաղաց մինչև կիրակի առաւօտուալ
ժամը երկուսը, և մինչդեռ մօտ դիակը հանգչում էր տան մէջ,
նա ամբողջ ակոյ կիրակի օրը անցկացրեց գինետան մէջ և
արբած զլտորելով ման էր դալիս փողոցներում մեծ զալթա-
կղութիւն պատճառելով գիւղացիներին: Հետեւեալ օրը սկսեց
ստանալ կրօնական հրահանգը օրհնութեան պատրաստուելու
համար: Իւր առաջին հաղորդութիւնը առնելուց երեք չորս
օր առաջ սամբարշտացաւ անճոռնի անբարոյականութեամբ:
Հալըրը տուել էր նրան լիսուն կոպէկ խոստովանահօրը տալու
համար իբր աջահամբոյր: չարաճճի Զօրջը իւր մեղքերը խոս-
տովանելուց լետոյ միայն չորս կոպէկ է դնում խոստովանա-
հօր ձեռքը իսկ քառասուն վեց կոպէկը իր համար է
պահում: Հաղորդութիւնն առնելուց լետոյ նա շարունակում է
վարել մի անառակ և անպատիւ կեանք: Երբ տասն և վեց
տարեկան էր, հալըրը լանձնարարեց նորան հաւաքելու մի բա-
ւական մեծ գումար ալն անձերից որ պարտական էին իրեն:
«Իմ ունակութիւնը մղեց ինձ վատնել ակոյ փողի մի մեծ մա-
սը: Ստացագրերի մի մասն էի միայն տալիս հօրս, իսկ միւս

մասը մօտս էի սլահում հաւատացնելով նորան թէ դեռ չեմ ստացել փողերըրո՛ւ:

Քսկից փախած

Ոչ ոք կարող է զարմանալ սրանից լետով լսելով թէ ալս փոքրիկ լոթին արժանանում է բանդի տեսքին տակաւին տասնհեօթ տարեկան հասակը չմտած: Որին մէկը զնաց կերուխումի, վեց օր անց կացրեց Մագդեբուրգում մեծ մեղքի մէջը, իւր քսակը դատարկեց Բրոննսնիկում, ուր ունէր մի սիրուհի, և ուր մի ինչ որ հիւրանոցում պարտաւորուեցաւ իւր ամենալաւ զգեստները վրայ տալ պարտքից ազատուելու համար, և լետով, Ուօլֆբուտէլում երբ աշխատում էր խաբել տան տիրոջը և կծիկը դնել բռնուեցաւ ու բանտարկուեցաւ իբրև թափառական գող: Այնտեղ նա երեք շաբաթ կողպուեալ մնաց, և սովորաբար դուրս եկաւ շատ աւելի վատթարացած քան ինչ որ էր ներս մտած ժամանակ: Բանդից աւղատուելուց լետով հօրիցը մի այնպիսի ծեծ կերաւ որ իւր կեանքում տեսած չէր, բալց ինչ արած որ էլի չխրատուեցաւ: Եւ մինչդեռ այսպէս սուտ էր խօսում, խաբում էր ու գինովանում, և շատ անգամ մեծ մեղսապարտութեան մէջ էր գտնուում, լանկարծ հարկադրուեցաւ լրջօրէն պարապուիլ իւր գրքերով:

Անասկութեան և Աստուածարանութեան դասընթացքը:

Հալըը միտքը դրած էր ալս սրիկային անպատճառ հոգեւոր կոչման համար պատրաստել, որպէս զի ծերութեան օրերում Աստուծոյ պաշտօնէի տեսութեամբը մխիթարութիւն ըզգալ: Կրօնական գրքերի ակամալ ընթերցումից երեք ամիս հիւանդ անկողնում պառկած մնաց գլխի տակ միշտ պահած ունենալով ամենացոյի վէպերի հատորներ: Ապաքինուելուց լետով նորէն ձեռք առաւ իւր առաւ-փախաւի վարմունքը, զգուշաւորութեամբ խուսափելով ակներև լկտի խարդաւանանքներից, որպէս զի դարձեալ բանտը չընկնի: Քսան տարեկան հասակում վերստին անկողին մտաւ իւր գործած անառակութիւնների հետեանօք: Առողջանալուց լետով ալ անգամ էլ բոլորովին խալտառակեց իւր հօր անունը, գրաւի դրեց իւր գրքերը, և մի քանի իր նման լոթիներով գնաց Զուլցերիվան դալու: Իւր արած խոստովանութիւնից կարելի է դատել թէ ալս միջոցին նա ինչպէս իսպառ կորցրած է եղել պատուի:

և ուղղամտութեան ամենատարրական զգացումը: Այդ շրջագալութեան միջոցին ես նման էի Յուդային: Ծախսարարութեան պաշտօնը ես էի կատարում և գողութիւն էի անում: Դործը արնպէս դարձրեցի որ արդ ճանապարհորդութիւնը իմ վրալ նստեց միայն երկու երրորդը քան ինչ որ նստել էր ընկերներիցս իւրաքանչիւրի վրալ»:

Նորա զարձի դալը:

Ահա արսպէս էր Զորջ Միւլէր երբ, 1825-ին, ուսանում էր Հալի համալսարանում. 900 աստուածաբանական ուսանողները հետ որոնք արտօնեալ էին, քարոզ խօսելու, թէպէտեւ, լեռնոլ աւելացնում է ասելով լատին հիմնաւոր փաստեր ունէի հաւատալու թէ արդ 900-ից և ոչ իսկ իննի սրտի մէջ չկար Աստուծոլ և արդարութեան երկիւղը: Եթէ միւս 890-ը Զորջ Միւլէրի պէս էին պէտք խոստովանիլ թէ արդ վճիւր հաւանականաբար անգութ մի դատապարտութիւն չէ: Նա ասում է թէ թէպէտեւ ըստ սովորութեան տարին երկու անգամ հաղորդում էր, սակայն չունէր Ս. գիրք և ոչ էլ երեսն էր տեսել չորս տարիից ի վեր: «1825-ի նոյեմբերի սկզբից առաջ ես բնաւ երէք լսած չէի Աւետարանի քարոզութիւն: Ամենեւին չպատահեցալ մի մարդի որ ինձ ասէր թէ նա Աստուծոլ օգնութեամբ ցանկանում է իւր կեանքը անց կացնել ո. գրքի համաձայն»: Այլ սակայն մի ինչ որ շփոթ իղձ սկսել էր ծագել արդ թոկից փախածի սրտում երբ, 1825-ի նոյեմբերին մի ընկեր պատմեց իրեն մի շաքաթ օրուալ գիշերալին հաւաքումի մասին բարեկամներից մէկի տանը ուր կարդացել էին ո. գիրք, երգել էին, աղօթել էին, և տպագրուած մի քարոզ էին կարդացել: «Այս պարզ տեղեկութիւնը իմ վրալ մի արնպիսի ներշնչում գործեց որպէս թէ վերջապէս գտել էի արն բանը որի ետեից ման էի գալիս ամբողջ կեանքումս» ինչ որ շատ զարմանալի է եթէ չասեմ աւելին:

Ինչպէս պատահեցալ:

Այսուամենայնիւ, բազմաթիւ բաներ զարմանալի են արտառոց աշխարհի մէջ, և յենք պէտք է կուտանք աստածոները իւենց եղածին պէս: Զորջ Միւլէր գնաց արդ շարաթօրեալ գիշերալին աղօթածողովին: Այդ միջոցին Պրուսիալում «ո. գիրքը մեկնելու համար կանոնաւոր՝ ժողովներ ունենալն արտօնեալ չէր առանց ձեռնադրեալ եկեղեցականի ներկայութեան», ուստի նոքա միայն կարդում էին մի գլուխ ո. գրքից

և մի տպուած քարոզ, Սակալն և արնպէս արդ զիշերալին ժողովը լեղաշընց Զորջ Միւլէրի կեանքի բովանդակութիւնը: Նա շտկէշիտակ խոստովանում է թէ ստուգիւ ինքն էլ չէ հասկանում, ինչպէս տեղի ունեցաւ արդ փոփոխութիւնը: Նա առաջ կարծես ամենևին չէր տեսել ու և իցէ մէկին ծունկի եկած ազօթելիս: Ազօթողների տեսքը խոր տպաւորութիւն արեցին նորա վրա: Ես երջանիկ էի, թէպէտ և եթէ հարցնէին ինձ երջանկութեանս շարժառիթը լստակօրէն չպիտի կարողանալի բացատրել: Երբ վերադարձաւ տուն, արնքանն եմ մտաբերում որ, խաղաղ և երջանիկ սրտով անկողին մտալ: Երևի խղճի խալթ չէր զգում իւր նախկին մեղքերի համար, և բոլորովին մոռացել էր, որովհետեւ ասում է: «Ես ձեռք բերեցի իմ արդ ուրախութիւնը առանց ու և է խղճի խոր կակիծի և գրեթէ անգիտակցաբար: Այդ երեկոն եղաւ իմ կեանքի լեղաշընջման օրը»:

Այդ օրից սկսեալ նա փոխեց իւր ապրելու եղանակը, դադարեց թուղթ խաղալուց, և ալրեց մի ֆրանսերէն վէպ որ թարգմանում էր գերմաներէնի: Կարդում էր Աւետարանից, շարունակ աղօթում էր, և գնում էր եկեղեցի: Եւ երբ սատանան նորից քշում էր նորան առաջուակ ճանապարհի վրայ, ու ենթարկւում էր լալտնի կամ գաղտնի փորձութիւնների, անմիջապէս սրտանց ցաւում էր, և մի առ ժամանակ լեռող նա սկսեց լրջօրէն մտածել միսիոնարական գործին նուիրուելու: Հրապուրիչ ճեանք

Բայց լեղեմալ դրախտի հին փորձիլը մի նոր Եւալի կերպարանք մտած մտածեց մոլորեցնել ուղիղ ճանապարհի վրայ ընկած երիտասարդին: Աղջկալ ծնողքը չէին թուլատրում որ նա դառնար միսիոնարի կին, և երիտասարդին համար կեանքը երևում էր իբր մի դատարկ սնապատ առանց արդ աղջկան, ու արնպէս ողբալի հետևանքի հասաւ գործը որ Միւլէրը վեց շաբաթ դադարեց աղօթք անելուց և արն հոգևոր ուրախութիւնը որ սկսել էր զգալ իսպառ չքացաւ իւր սրտի մէջից: Բայց Զատիկին նա լսեց մի հարուստ երիտասարդի մասին որը ձգել էր իւր փարթամ կեանքը Լեհաստանի հրեաների մէջ աւետարանելու նպատակաւ: Այս օրինակը մեծապէս ազդեց Միւլէրի վրա: «Ես բոլորովին մոռացել էի Տիրոջ գործը—կարող եմ ասել Լատուժուն էլ էի մոռացել—մէկ աղջկալ սիրոյն համար»: Ի՞նչ՞ աղջիկ, շուտով գահընկեց եղաւ Զորջի

սիրու խորանի վրալից: «Նա կարողացաւ մոռանալ ալս սիրալին շտղկապը որ ձեռնարկել էի առանց աղօթք անելու, և որ ալսպէսով ինձ մոլորեցրել էր Աստուածալին շաւիղից»։ Որոշակիք խորտակուած էր ալ ևս, և ալսպէս «կեանքիս մէջ առաջին անգամն էր որ կարող եղաւ լիովին ու անկեղծօրէն անձնատուր լինել Աստուծոյ»։

Վարձատրութեան առաջին փորձը։

Ինքը ասում է թէ ալդ ժամանակից սկսեց էապէս վախելել Աստուծոյ սէրը որ ամեն իմացականութենէ գեր լի վեր էր, և որ զօրութիւն էր տալիս իրան դիմանալու իւր հօր զարուիթին որովհետեւ հալը որ միշտ երազում էր տեսնել իւր զաւակին մի հարուստ թեմի երեցը ալժամ սաստիկ բարկացել էր տեսնելով նորա լամառութիւնը «անկուտի» միսիոնար դառնալու մասին։ Հակաճառութիւնը սաստկացաւ ալն աստիճանի որ նա մերժեց ստանալ ո և է դրամ իւր հօրից. «Անցողարար արմէ ալստեղ դիտել տամ թէ Տէրը խիստ արտասուլոր կերպով հալթալթեց իմ չափաւոր պէտքը»։ Մի քանի ամերիկացի միսիոնարներ ուղելով գերմաներէն դասեր առնել, դիմեցին նորան և աւելի փող էին վճարում քան ինչ որ սովորարար ստանում էր իւր հօրից»։

«Այսպէս Աստուած առատօրէն վարձատրեց ինձ որ ես նորա սիրու համար մերժեցի հօրս դրամական օգնութիւնը»։ Իւր ինքնակենսադրութեան առաջին աղօթանիշն է ալս որի դրամաւոր թրթռումները տարուէ տարի աւելի ընդարձակ ծաւալ գտան մինչև նորա երկար և արդիւնալից կեանքի վախճանը։

Վիճակասող։

Միւլէր բշտրովին վստա՜ չէր թէ արդեօք պիտի լաջողի միսիոնար դառնալ թէ ոչ։ Ուստի, իբրև թէ հարցը որոշելու հաշուով, նա ինքն իրեն վիճակ է քաշում և սպա գնում է արքունի վիճակահանութեան մի տոմս, որոշելով որ, եթէ պարգևը շահելու լինի, ալդ նշան է թէ Տէրը կամենում է որ ինքը լինի միսիոնար։ Անկասկած, սորանից աւելի պիղծ մեթօդ քնաւ տեղի ունեցած լինելու չէր խորհրդաւոր պատգամատուին հարցափորձելու համար։ Նա շահեցաւ մի պարգև, ուստի և մեծ եռանդով պէտք եղած դիմումները արեց միսիոնարական պաշտօն ստանալու։ Սակայն մերժողական պատաս-

խան ընդունեց, որովհետեւ հօր հաճութիւնը չկար գործին մէջ-
իսկոյն նա սկսեց մտածել թէ վիճակ քաջելը բոլորովին սխալ-
մունքի մէջ է ձգել իրան: Այնուամենայնիւ դարձեալ փորձեց
շատ անգամներ, բայց չկարողացաւ ու իցէ լուծում տալ գոր-
ծին: Մի անգամ, ճանապարհը կորցնելիս աղօթք արեց
որ ճանապարհը գտնէ և ապա ինքն իրեն վիճակ քա-
ջեց թէ արդեօք դէպի աջ եթէ ոչ դէպի ձախը գնալու
էր: Վիճակը ընկաւ ձախ ճանապարհին, բայց ձախ տանում
էր բոլորովին սխալ կողմ, և երբ իմացաւ, արդէն բանը բա-
նից անցիւ էր: Էլ քալելու կարողութիւն չէր մնացել վրան:
Ուստի աղօթեց Աստուծոյ որ մի ճար անէ «և դրեթէ անմի-
ջապէս մի կառք վրաւ եկաւ, և ես նորանով գնացի մինչև
բնակարանիս մօտ»:

Նորա երկխոսական հաւատքը:

Միւլէրը հիմա քսան մէկ տարեկանից անց էր: Նա շատ
իրաւացի կերպով նկատում է իւր մասին.—

«Աստուածաբանական կեանքիս բուն իսկ սկզբից Տէրը
գթասիրաբար տուեց ճիշտ ինձի լարմար մրամտութիւն և ե-
րեխայական բնաւորութիւն հոգեւոր բաների վերաբերմամբ,
աչնպէս որ, մինչդեռ չսփառանց տգէտ էի աստուածաշունչը հաս-
կանալու մէջ, և դեռ ևս ժամանակաւ ժամանակ լաղթահարուում
էի նոյն իսկ մարմնաւոր մոլորութիւց, աչնուամենայնիւ իմ մէջ
զգում էի կարողութիւն աղօթքիս միջոցաւ ամենամանր մունր
մունր խնդիրներս ներկայացնել Աստուծոյ ու նորա կամքը-
հացելու»:

Քաւ լիցի որ մեր պարկեշտ Ջոնի մտքի ծալիքին իսկ
անց կենար թէ Ամենակալ Տէրը կարող էր նեղանալ ու ան-
հանգիստ լինել ալն ամեն հալցուածքներից որ ուղղում էր
Տիրոջը թէ ալս աշխարհի և թէ մանաւանդ հանդերձեալ աշ-
խարհի մասին, նա ալն հաստատ կարծիքն ունէր թէ Տէրը
սպասում էր իւր աղբյիսի վարմունքին, և ընդհակառակն ա-
ւելի կընեղանար ալն պարագային եթէ դադարէր խորհուրդ
հարցնելուց Նորանից իւր կեանքի ամեն մի չնչին պարագա-
լի առթիւ:

Մի «Մագալու» — Արտառոց — օրինակ:

Կինը իւր անդրանիկ զաւակի ծննդաբերութեան միջո-
ցին տասն և եօթ ժամ երկունքի ծանր ցաւեր է քաշում

և ի վերջոյ ծնում է մի մեծած զաւակ.—ալս առթիւ ալդ Վա-
ղալու» մարդի լուշատետրի մէջ գտնում ենք մի նկատողու-
թիւն, թէ որովհետեւ ամենեւին շերմեռանդաբար աղօթք չէր
արել ծննդականութեան համար և—իւր առաջին փորձառու-
թիւնը լինելուն պատճառաւ—ամենեւին լրջօրէն չէր մտածել
լարակից մեծ վտանգի մասին, ուստի «տարակոյս չունի թէ
Տէրը, իւր անհոգութեան համար, ղրկեց իրեն ալդ ծանր պա-
տուհասը: Բայց այստեղ պէտք չէ մոռանանք միանգամայն
ասելու թէ երբ երեսման ծնելու մօտ էր, նա թողեց իւր կըն-
կանը իւր սոսկալի երկունքների մէջ ու գնաց կատարելու մի
ինչ որ քարոզական պարտականութիւն: Որի առթիւ գրումէ.

«Դիտողութիւն—1) Տէրը ողորմածաբար ճիշտ ժամանա-
կին ղրկեց բժիշկին ու հիւանդապահ դակտերին: 2) Տէրը ա-
սեց ինձ իմ սրտում որ պատուեմ նորան նախամեծար համա-
րելով հոգ տանել նորա տանը քան թէ իմ սեփական տան
գործին, և այսպէս նա գթասիրաբար խնայեց ինձ երեք տա-
ժանելի ժամերից»:

Ահա, Զօրջ Միւլէր սկզբից մինչև վերջոյ: Շատ հետա-
քրքրական կլինէր իմանալ թէ կինը ինչ էր մտածում ալդ
մասին: Մարդկալին արդարութեան զաղափարների համար մի
քիչ դժուար է հասկանալ թէ ամուսնի պարտադնացութեան
պատճառաւ ինչո՞ւ խեղճ կինը պիտի դատապարտուէր տասն-
և եօթն ժամուաւ չարչարանքին:

Վասն դարձին Հրէից:

Արդէն գուշակում էի: Զօրջ Միւլէր ալժմ սկսել է քա-
րոզելու Աւետարանը: Բայց ինչ արած որ ալս փորձանաւոր
աշխարհում ամեն մարդի նման Միւլէրն էլ ունեցաւ իւր Ե-
լեէջները, և մի անգամ այն աստիճան ետ ետ գնաց որ փա-
ռաւորապէս զինովացաւ: Թէպէտև իւր լոթիւթեան օրերում
սովորութիւն ունէր կոնծելու տաան շիջ թունդ տեսակի սեւ
գարնջուր մի կէս օրուալ մէջ, ալ հիմա չէր կարողանում զի-
մանալ երկու երեք բաժակ զինիլ ազդեցութեանը, ալսպէս
որ զինիլից էլ գլուխ քաշեց: Եւ հոգ տարաւ ժրջանութեամբ
օգտուել շնորհաց բոլոր մատչելի միջոցներից: Կիրակի օրերը
տաան տաանհինգ մղոն հեռու տեղեր էր գնում բարեպաշտ
քարոզիչներին մօտիկ անելու, խնամքով խորշում էր բոլոր
ոչ-հոգևոր գրուածքներից:

Քսան երկու տարեկան միջոցին հրաւէր ստացաւ երթալ

հրէաներին աւետարանելու: Երբայեցերէնի երեւելի ուսանողներէն մէկը համարուած լինելով, 1823-ին Լոնդոնի մի աւետարանական ընկերութեան կողմէ հրաւէր ընդունեց երթալ հրէաների մէջ քարոզ խօսելու: Բայց ղեռ ևս իւր զինուորական ծառայութեան շրջանը ունէր Պրուսիական բանակում, բարեադրաբար, մի անգամ դարձեալ աշխարհալին փորձութիւններէն մղուած դնալով մի օպերայի ներկայացմանը, տէտեղ սառցաջուր է խմում և դրա վրայ սաստկապէս հիւանդանում ախպէս որ զինուորական բժիշկները նրան նկատում են իբր անշարմար զինուորական ծառայութեան համար, որովհետեւ «խռքախտի հակումն ունի»: Այսպէս գլուխը պրծացնելուց սաստիկ ուրախացած, Զորջ Միլլէր գտլիս է Լոնդոն 1829-ի մարտի 19-ին: Այստեղ նա լաճախեց սեմինարիան և ամեն օր տասն և երկու ժամ անց էր կացնում երբայեցերէնի և քաղզիւրէնի ուսումնասիրութեամբ: Ամառը ղեռ կէս չնդած, բոլորովին կորցրեց իւր առողջութիւնը, և բժիշկների լանձնարարութեամբ զրկուեցաւ ամարանոց:

Եւ դարձաւ նա առ հեթանոս:

Առողջանալուց լետով նա գնաց Բէլմուտ ուր իւր կոտորած անդիւրեղնով սկսեց քարոզներ տալ տասն և ութ ամառաներից կազմուած մի փոքրիկ եկեղեցիին: Նորա քարոզութիւնը հենց սկզբից սաստիկ հակառակութիւն լառաջ բերաւ իւր դէմ: Առ ալս, բաւական զուարճալի կերպով դիտել է աալիս:

«Այս երեւոյթին ուրիշ կերպ մեկնութիւն չկարողացաւ տալ, բայց եթէ ալն որ Տէրը իմ միջոցաւ կամեցաւ գոյժել Բէլմութում, և սատանան ալս բանից վախենալով հնարքներ փնտռեց հակառակութիւն լարուցանելու ինձ դէմ»:

Ահա քեզ, մի սքանչելի պատճառաբանութիւն, լաւիտեանական չիշատակի արժանի:

Բայց շուտով համոզուեցաւ թէ սատանայի հետ զլուխ չէ կարող դալ: Եւ հասկացաւ թէ բնաւ իւր կոչումը չէ դարձի բերել խտտապարանոց հրէաներին, որոնք չէին ուզում լսել աւետարանի անունը: Բացի ալս, լինելով կամակոր և ծալրալեղ բնաւորութեան տէր մարդ, նա ընդդիմաճում էր միասնաբական ընկերութեան կոյր գործիքը լինել: Ինքը պէտք է լինի Աստուծոյ մարդը և միմիայն Աստուծոյ, ոչ ոք իրաւունք ունի հրամաններ տալ իրեն ի բաց առեալ սուրբ Հոգին: Եւ ըստ որում երկնային Հսկողը զրած էր նրա սրտում թէ նա

սլարտի երթալ քարոզելու եկեղեցիների շուրջը, ուրեմն զարմանալի չպիտի երևի եթէ ասէնք որ 1830 ի լուսնուարի 30-ին միսիոնարական ընկերութիւնը իւր լարաբերութիւնը խզեց ալս կրնական-ապստամբի հետ:

Հովիւ առանց ամսականի:

Նա հիմա ազատ էր. Նոյն քաղաքի ժողովրդի միաձայն հրաւերի վրայ ստանձնեց նոցա եկեղեցիի հովուութեան պաշտօնը տարեկան 550 ռուբլի ռոճիկով: Այդ միջոցին նա ամուսնացաւ, և գրեթէ անմիջապէս լետով նա ետ կեցաւ կանոնաւոր ռոճիկ առնելու դրութիւնից. նա այդ բանը համարում էր իբր հակառակ քրիստոնէական կրօնի ոգւոյն: Մի տուփ դնել տուեց եկեղեցիի դրան մօտ որպէս զի ամեն ոք իւր լծար կամքով ձգէ այնտեղ իւր հովուական տուրքը, տսելով թէ իւր ապրուստի միջոցների համար նա ապաւինում է Աստուծոյ և ժողովրդին:

Նա մնաց Բէլմութում մինչև 1832-ի մալիս ամիսը, լետով փոխադրուեցաւ Բրիստոլ: Այս միջոցին արդէն սուրբ մարդի համբաւն էր ստացել ամբողջ գաւառում:

Բրիստոլում:

1832-ին երբ տեղափոխուեցաւ Բրիստոլ, սկսաւ գործել իւր գծած ուղղութեամբ—քուերալի պահուն խնամում էր վարակուածներին, սնունդ էր գտնում անօթիներին և մտածում էր՝ աղքատ տղաների և աղջիկների մասին: Այս մտածումը ալն աստիճան սաստիկ էր զբաղեցնում նորան, որ 1834-ի մարտի 5-ին լղացաւ մի նոր գաղափար—երկրի և արտասահմանի համար հիմնել Աստուածաշնչալին գիտութեան հաստատութիւն, որի մէջ պիտի պարունակէր նաև որբանոցը: Այժմ որ ինթե ծանօթութիւն ստացած ենք ալ ևս Զորջ Միլլէրի անձնական կեանքի մասին, ժամանակ է կարելի եղածին չափ ամփոփ կերպով լառաջ բերել և լստեղ նորա գործերը:

IV.—Մարդի գործերը

Երկրի և Արտասահմանի Աստուածաշնչալին գիտութեան Հաստատութիւնը ունէր հետևեալ նպատակը, ալսինքն—1) հիմնել ցերեկօթեալ դպրոցներ, կիրակնօրեալ դպրոցներ, և շափահտաների դպրոցներ: 2) շրջաբերութեան հանել ս. գրքի աժանագին օրինակներ, և լատկապէս ամենաաղքատ դասա-

4) Կարգի մէջ 3) նպաստել միսիոնարական գործողութիւններին:
 4) Շրջաբերութեան հանել կրօնական գրքեր, գրքոյկներ և ճառեր բարիք անելու համար հաւատացեալներին ու անհաւատներին:

Նորա որբանոցների սկզբունքը:

1835-ին որբանոցի գործը հիմնուել էր: Եւ այս առթիւ հաստատութեան կանոնագրի մէջ դեռ այն ժամանակից դընուժ է հետեւեալ երկու լիշատակելի սկզբունքները—նախ, թէ պարտք ամենեւին չպիտի առնուի, և երկրորդ, թէ ոչ մի հարուստ կամ մեծ մարդ չպէտք է լինի նորա պաշտպանը, ալ թէ կենդանի Աստուածը միայն պիտի լինի ալդ հաստատութեան պաշտպանը:

«Աստուած օգնելով մեզ, մենք չենք կամենալ պաշտպանութիւն խնդրել մարդկանցից, զօրօրինակ ամենեւին չենք կամենալ դիմել մեծ կամ հարուստ անզեղջ անձինքներին որ քաջալերեն այս հաստատութիւնը, որովհետեւ մենք ալդ բանը համարում ենք իբր մի անպատիւ վարմունք լաչս Աստուծոյ: Նա միայնակ պիտի լինի մեր պաշտպանը: Մենք բոլորովին մերժում ենք անհաւատների օգնութիւնը Հաստատութեան գործերը ի զուլս հանելու և լառաջ տանելու մասին»:

Անհաւատները արտօնեալ էին նպաստ տալու, բալց բընաւ չպէտք է խնդրուէր նոցանից որ նպաստ տան, որովհետեւ Միւլէրը կարծիքով անհաւատ չէին նկատուում նոքա, որոնք իրենք իրենց լոծար կամքով ուզում էին նպաստ տալ:

Նորա ուրիշ գործերը:

Միւլէրի նախաձեռնութեամբ զանազան տեղերում բացուել են և պահպանուել են դպրոցներ իրենց նպատակ ունենալով քրիստոնէական ուսումը տարածել, և այսպէս վաթսուն երեք տարուայ գործունէութեան ընթացքում 121,683 երիտասարդներ են կրթութիւն ստացել ալդ ուղղութեամբ, սոյն հաշուից բոլորովին դուրս է մնում որբանոցներից դուրս եկողների թիւը: Այս դեռ ևս նորա գործունէութեան ամբողջութիւնը չէ կազմում: Ալդ վաթսուն երեք տարուայ ընթացքում նորա ձեռքի տակից շրջաբերութեան են հանուել աշխարհի ամեն կողմերը, և զանազան լեզուներով, 281,652 Աստուածաշունչ, 1,448,662 Նոր-կտակարան, 21,343 Սաղմոս, և 222,196 ալ և ալ մասեր Ս. Գրքից: Զորջ Միւլէրի Հաստատութիւնից ար-

տաղրուած և ցրուած կրօնական գրքերի, գրքովիների, և ճառերի ամբողջ թիւը հասնում է 112,000,000-ի:

Մօտաւորապէս 4,000,000 ուրբլի է հաւաքուել ու ծախուել ալս կրօնական հսկալ գործունէութեան համար: Իսկ որպանոցների համար հաւաքուած և ծախսուած գումարը 10 միլիօնից անց է:

Որբանոցների անհրաժեշտութիւնը:

1834-ին երբ պարոն Միւլէր ձեռնարկեց իւր գործին, տակաւին որբանոցներ չկալին Անգլիայում: 1836-ից 1897-ի ժամանակամիջոցում նորա որբանոցները պատսպարել և խնամել են 9,844 որբ երեխաներ, իսկ ալս մասին եղած ընդհանուր ծախսը ինչպէս լիշեցի հասնում է տասն միլիոն ուրբլիի:

1891-ի իւր մի գրուածքի մէջ պ. Զ. Միւլէր ասում է.—

«Այն ժամանակ երբ ամբողջ սրտով մտածում էի որբերի վիճակի մասին, միայն 3,600 որբերի համար տեղ կար Անգլիոյ բոլոր որբեր դաստիարակելու հաստատութիւնների մէջ, միանգամայն, ութ տարեկանից ցած 6,000 որբեր էլ գտնուում էին Անգլիոյ բանտերում, ինչպէս որ հանրալին վիճակագրութիւնն է վկայում: Այս բանը խորապէս ազդում էր իմ վրայ, ուստի հետամուտ եղալ ընդարձակել որբերի գործը որքան որ կարողութիւնս կտանէր: Եւ գործը վերջացաւ նրանով որ հնարաւորութիւն եղաւ ձեռք բերել ամեն լարմարութիւններ, 2,050 որբերի և միանգամայն 112 օժանդակների հոգատարութեան համար, և սորա հետեանքն ալն եղաւ, որ մասնաւորների կամ ընկերութիւնների շնորհիւ, իրար ետևից բացուեցան հաստատութիւններ 20, 30, 50 կամ 100 որբերի ընդունելութեան համար, կամ թէ շինուեցան որբանոցներ 200, 300, 400 և նոյն իսկ 500 որբերի պատսպարութեան համար, ալնպէս որ ալժմ, շատ գոհ եմ ասելու, թէ Անգլիայում միայն գոնէ 100.000 որբեր պատսպարելու և դաստիարակելու լարմարութիւն կալ:

Ինչպէս բաղմացան:

1836-ի ապրիլին պ. Միւլէր Բրիտտոլում բաց արեց մի մեծ վարձու տուն, 30 որբերի ընդունելութեան համար, 1837-ին մի երրորդ տուն երեքուն որբերի համար և 1843-ին մի չորրորդ տուն 30 որբերի համար, ալսպէս ուրեմն եօթ տարի վերջը իւր ձեռքի տակ արդէն ունէր 126 որբեր և 11

օժանդակներ կամ ուսուցիչներ: 1849-ին չկարողանալով զըտնել որբանոցի լարմար մի նոր վարձու տուն, նա հիմնարկեց առաջին որբանոցը 300 որբերի ընդունելութեան լարմար: 1857-ի նոյեմբերին նա հիմնարկեց երկրորդ որբանոցը 400 որբերի ընդունելութեան լարմար: 1862-ի մարտին, երրորդ որբանոցը 450 որբերի համար, և 1869-ին, չորրորդ որբանոցը 450 որբերի համար: Այսպիսով նա ունեցաւ մի ահագին պատասպարան 2,050 որբերի և 112 օգնականների տեղաւորման համար: Որբանոցի սէջ ապրիլու պայմանաժամը իրար վրայ հաշուելով եղած է ութից մինչև ինն տարի, սակայն՝ երեխալութիւնից ընդունուած շատ աղջիկներ խնամուել են ալիւ լարկի տակ մօտաւորապէս մինչև տասն և եօթ տարի:

Նոցա տնօրինութիւնը

Վաթսուն և մէկ տարուաւ ժամանակամրջոցում 9,844 որբեր են անց կացել Միւլէրի որբանոցներից: Ամենից լաւ է լինել ալստեղ Միւլէրի սեփական վկայութիւնը ալն սկզբունքների վերաբերմամբ, որոց հիման վրալ նա հաստատեց իւր որբանոցները և կառավարեց մինչև իւր մահը:—

Վերելանների ընդունելութեան խնդրում մենք ոչ կընեըընչուինք ոչ էլ մաղի չափ կազդուենք կրօնական խտրականութեան նկատումներից: Մենք չենք պատկանում ունէ աղանդի, և սորա համար որբերի ընդունելութեան մասին չենք էլ թելադրուած լարանուանականութիւնից, ալ ինչ տեղից որ գալու լինեն, ինչ դաւանանքի էլ որ պատկանած լինեն նոցա ծնողքը, կամ թէ ինչ հաւատքի էլ որ վերաբերեն դիմում անող անձերը, ալի ո և է տարբերութիւն չի անիլ երեխաների ընդունելութեան մասին: Բաց և ալնպէս, նա զծել էր երեք էական պատճառներ իբր նախաշաւիղ ընդունելութեան: Միալն հաւաքատ երեխաները նախամեծար պիտի դասուէին, և նոքա զրկուած պիտի լինէին հօրից և մօրից և նիւթական աղքատ կացութեան մէջ: Այս երեք հանգամանքներն ունեցող և վկայութեամբ հաստատուած բոլոր երեխաները անաբգել ընդունելութիւն գտել են Միւլէրի որբանոցներում: Սոցանից ոմանք ընդունուել են մի քանի ամսական հասակից, և ուրիշներն աւելի տարիքոտ ժամանակից, ալսպէս ուրեմն որբանոցում խնամուելու միջոցը անպայման է եղած: Աղջիկները զլիաւորապէս պահպանուել են մինչև տասն և եօթ տարեկան դաւնալը: Իւր պատմութիւններից մէկում ալս մեծ մարդա-

սէրը ինքը համառօտակի ցոյց է տալիս ալն ընտանեկան վարժութիւնը որ լատկապէս տրուում էր աղջիկներին: Անոք սովորում են կարգալ, գրել, թուաբանութիւն, Անգլիերէն քերականութիւն, աշխարհագրութիւն, Անգլիական պատմութիւն, մի քիչ ընդհանուր պատմութիւն, և ամեն տեսակ օգտակար ասեղնագործութիւն և աւալին գործեր: Նոքա իրենք են կարում և ապա կարկատում իրենց հագուստները, աշխատում են խոհանոցներում, կերակուր են եփում և ամանները լուանում, նոքա են նոյնպէս լուացքը անում, և մի խօսքով մենք մեղի նպատակ ենք բնտրել ինչ որ պէտքն է, ալնպէս որ, եթէ նոցանից ու է մէկը մարմնաւորապէս և հոգեպէս լաւ դուրս չգալ, և չսկսի դառնալ ընկերութեան մի օգտակար անդամ, գոնէ ալն ժամանակ մեր մեղքը չի լինի: Տղաները ընդհանրապէս աշկերտութեան են տրուում հենց որ տասն և չորս կտմ տասն և հինգ տարեկան են լինում, և ամեն մի տղալի աշկերտութեան մտնելուն համար վարպետին վճարում ենք 130 ռուբլի, միայն թէ իւրաքանչիւր մի պարագային մենք ի նկատի ենք առնում աւճնիւր որբի բարօրութիւնը, ուստի չենք ուզեցած հաստատագործել մի առանձին կանոն տղալի ապագան չկաշկանդելու համար: Տղաների ազատ կամքին է թողուած ընտրելու և սովորելու իրենց սիրած արհեստը կամ զբաղումը, բայց մի անգամ ընտրութիւնը անելուց, և աշկերտութեան մտնելուց լետով, մենք ալ ևս չենք թողաւորում փոխել և մի ուրիշ ընտրութիւն կատարելու: Թէ տղաների և թէ աղջիկների համար կազմուած են լատուկ արձակուրդներ, և նոցա աշկերտութեան վերաբերեալ բոլոր ծախքերը որբերի հաստատութեան զրամագլխից է տրուում:

(Մանօթ.—Մինչև արսոր Անգլիալում սովորութիւն է որ մի արհեստ սորվելու համար ծնողները մի որոշ գումար են վճարում արհեստագործական հաստատութեան տէրերին աշկերտութեան մտնող տղաների համար):

Սօթանանամեայ ծերունու առաքելական պտուղը:

Իւր կեանքի վերջալուսի միջոցին միայն պ. Միւլէր ըզգաց իւր արտասովոր ցանկութիւնը ճանապարհորդելու համար աշխարհի շուրջ և քարոզելու աւետարանը: Թէև անհաւատալի լինի, բայց և ալնպէս իրողութիւն է, թէ նա սկսեց իւր միսիոնարական ճանապարհորդութիւնը երբ արդէն եօ-

Թանասուն տարեկանից անց էր: Ահաւասիկ նորա սեռաքելական պտուղի ցանկը.

- 1) 1875, մարտից մինչև լունիս—Անգլիա,
- 2) 1875, օգոստոսից մինչև 1876 լուլիս — Անգլիա, Սկոտլանդ և Իրլանդիա:
- 3) 1876, սեպտեմբերից մինչև 1877 սեպտեմբեր—Եւրոպա:
- 4) 1878—Քանադա, Միացեալ Նահանգներ, 19,247 մըղոն, և 308 բանախօսութիւն:
- 5) 1879—Եւրոպա:
- 6) 1879, Օգոստոսից մինչև 1880, լունիս—Միացեալ Նահանգներ և Վանադա:
- 7) 1880 - սեպտեմբերից մինչև 1881, մալիս—Միացեալ Նահանգներ և Քանադա:
- 8) 1882—Եգիպտոս, Փոքր-Ասիա, Թուրքիա, Յունաստան:
- 9) 1882—Գերմանիա, Աւստրիա, Ռուսիա, Լեհաստան:
- 10) 1883—Հնդկաստան:
- 11) 1884—Անգլիա և Վալէս:
- 12) 1882—Հուլիս կղզին:
- 13) 1885, նոյեմբերից մինչև 1886, լունիս—Աւստրալիա, Չինաստան, Հալոն. 37,280 մղոն:
- 14) 1886, Հոկտեմբերից մինչև 1889, Ապրիլ—Աւստրալիա, Նոր Զելանդա, Հնդկաստան:

Նորա խորհրդածութիւնները երբ իննսունամեայ էր:

Պարոն Միլէր կարողանում էր Աւետարանը քարոզել եօթն լեզուներով: Նա քարոզ է խօսել քառասուն երկու երկրների մէջ, և նորա բոլոր ճանապարհորդութեանց տնջրպետը աշխարհի շուրջը վեց անգամ ճամբորդութիւն անելուց աւելի է: Նա ինքը իրան չէ խնայել: Օր չէ եղել որ քարոզ տուած չըլինի և եղած է օր որ երկու անգամ է քարոզել, ախպէս Լիվրպուլում երեսուն ութ օրուայ մէջ քառասուն ութ անգամ քար զ է խօսել: Եւ երբ քարոզ ենք ասում պէտք է հասկանալ զոնէ առնուաղն մի ժամուայ ատենաբանութիւն: Իւր իննսունամեայ ծննդեան տարեդարձի առթիւ արած ստեղծաբանութեան մէջ պ. Միլէր աւուպէս ասաց թէ.—

Ինքը երկու հարիւր հազար մղոնի ցամաքային և ծովային ճանապարհորդութիւն է կատարել իւր հանգուցեալ

մէջ հետ. քարոզ է խօսել քառասուն երկու երկիրների մէջ՝ Ամերիկա, Ասիա, Ափրիկէ, Եւրոպա, և Աւստրալիայի վեց զաղթալարերում: Թէպէտեւ ժամանակաւ շատ էր նեղում ծովային հիւանդութիւնից, բայց այն օրից որ ինքն իրեն դրից Աստուծոյ տրամադրութեան ներքեւ, ծովի վրայ ալ ևս ամենեւին սրտախառնութիւն չունեցաւ իւր ամբողջ պտուտների պահուն: Եօթն անգամ նա կտրել է Ատլանդեան ովկիանոսը, հինգ անգամ պատահել է Կարմիր ծովի վրայ, աասն և վեց անգամ անցել է Միջերկրականից: Նա անց է կացել նաև Խաղաղական և Հնդկական ովկիանոսների միջից, և ամենեւին գոնէ մէկ անգամ ծովից չէ բռնուել: Տեսնում էք ինչքան լաւ բան է եղել լինել հնազանդ ծառայ Քրիստոսի: Նորա մտալին կարողութիւնները մնացել էին պայծառ ինչպէս էին իւր դպրոցական վերջնական քննութիւնների ժամանակ այն է. եօթնասուն տարի և տասն ամիս առաջ, Որքան հրաշալի է Տիրոջ մարդասիրութիւնը: Տեսնում էք ինչպէս Աստուած կարող է գործածել մի չնչին որդը՝ որ լոկ մի բեկորի պէս էր երբ Տիրոջ ճանաչողութեան ճոնապարհի վրայ ընկաւ, և որը ալդ երեկոյ իւր իննսուն և մէկ տարուալ հասակի մէջ էր մտնում: Վաթսուներկնը տարի և տասն ամիս նա ապրեցաւ իբր երջանիկ մարդ, և շատ երջանիկ: Այս կէտը նա վերադարում է երկու պատճառի. — նախ՝ որովհետեւ բարի խղճմտանքով շարունակեց իւր կեանքը և կամակորութեամբ չհետեւեցաւ այնպիսի ընթացքի, որ գիտէր թէ հակառակ է Աստուծոյ կամքին: Անշուշտ սրանով չէ ուղում ասել, թէ ինքը մի կատարեալ սուրբ մարդ էր, ալ շատ լաւ էր իմանում որ աղքատ, տկար, և մեղաւոր մի արարած էր. իւր երջանկութեան երկրորդ պատճառը վերագրում է իւր ունեցած սէրին դէպի Ս. Գրիքը: Վերջին տարիներումս սովորութիւն ունէր տարին չօրս անգամ ծալրէ ի ծալր կարդալ Աստուածաշունչը սրտաբուխ փափագով և խորին մտածութեամբ, և ալդ օրը նա Աստուածային Խօսքի ամենամեծ սիրահար էր քան վաթսուն վեց տարի առաջ: Առաջ, որչափ անուշադրութեամբ և անտարբերութեամբ էի վերաբերում, և որչափ խորշում էի, այժմ այնչափ սրտով եմ կպած նորան: Ահա ալ, և բարի խղճմտանքով ապրելն է, որ նորան պարգևեցին ալդ ամբողջ վաթսուն վեց տարուալ խաղաղութիւնն և ուրախութիւնն ի Հոգին Սուրբ:

Անդլ. Քարդմ. Պ. ՅՕՆԱՊԵՏԵԱՆ

(Մնացեալը յաջորդ անգամ)